

## VI. ԳՈՐԾԱՌՈՒԹԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2003թ.-ի ընթացքում հրավիրվել է ՀՀ ՎՊԽ 20 նիստ: Նիստերի ընթացքում քննարկվել է 91 հարց և արդյունքում ընդունվել է 85 որոշում, որից 49 նորմատիվ, 17 անհատական և 19 արձանագրային:

ՀՀ ԱՎԾ համակարգում աշխատանքի բաժանումն ու մասնագիտացումն իրականացվել է ինչպես գործառնության (ճյուղային և բնագավառային վիճակագրություններ), այնպես էլ օպերացիոն (տեղեկատվության օպերատորական մուտքագրում, խմբավորում, ամփոփում և տրամադրում) սկզբունքներով: Բացի այդ, կիրառվել են նաև ունիվերսալ մասնագիտացման (մարդահամար, տնային տնտեսությունների, գյուղացիական տնտեսությունների, հասարակական և սոցիալական խմբերի ինտեգրացված հետազոտություններ) սկզբունքները:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է տնտեսագետների գերակշռությամբ (մոտ 2/3-ը) և բարձրագույն կրթությամբ կադրերի մեծամասնությամբ (91%):

2003թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ համակարգում աշխատանքի է ընդունվել 101 մարդ, աշխատանքից ազատվել՝ 118-ը, այդ թվում պաշտոնի է նշանակվել 44 քաղաքացիական ծառայող, որոնցից 13-ը մրցույթի արդյունքում նշանակվել է այլ պաշտոնի, պաշտոնից ազատվել են 42 քաղաքացիական ծառայող, որոնցից 2-ն ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: 2003թ. ընթացքում ըստ քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերի, համապատասխանաբար, վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակներով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբեր	Վերապատրաստվել են	Ատեստավորվել են
Բարձրագույն	1	-
Գլխավոր	23	21
Առաջատար	43	40
Կրտսեր	44	40
Ընդամենը	111	101

Կազմվել և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ է ներկայացվել 2004թ. ընթացքում վերապատրաստման և ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողների ցանկը, ինչպես նաև այլ աշխատանքներ՝ ըստ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներով սահմանված կարգերի:

ՀՀ ԱՎԾ նախագահի 08.09.2003թ. թիվ 14 հրամանով հաստատվել է ՀՀ ԱՎԾ հաստիքային ցուցակը 358 հաստիքային միավորի համար և 29.12.2003թ. թիվ 24 հրամանով՝ ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի աշխատատեղերի ցուցակը:

Ձևավորվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարձատրության կառուցվածքն ըստ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով ներկայացված աշխատավարձի հաշվարկման սանդղակների:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող մյուս միջոցառումները շարունակական բնույթ ունեն և գտնվում են իրականացման փուլում:

ՀՀ ԱՎԾ 9 աշխատակիցներ երկարամյա և բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվել են շնորհակալագրերով: